ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Համավարակի պայմաններում տեղեկատվական ոլորտի կարգավորման և լրատվամիջոցների վարքի

ԻՐԱՎԻՃԱԿ

2020թ. հունվարից՝ աշխարհի տարբեր հատվածներում, իսկ մարտից՝ նաև Հայաստանում նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածման վտանգի և հայտարարված արտակարգ դրության պայմաններում ճշգրիտ ու հավաստի տեղեկությունների անխափան տարածումը առանձնապես կարևորվում է, որպեսզի հասարակությունը ճանաչի վտանգները, և մարդիկ նաև անհատական մակարդակով ձեռնարկեն պաշտպանական միջոցառումներ:

Կառավարություններն իրենց բնակչությանը կորոնավիրուսից առաջացած սպառնալիքի բնույթի մասին հավաստի և ամբողջական տեղեկություններ պետք է տրամադրեն, ինչը նաև մարդու իրավունքների հարցերը կարգավորող ներքին օրենսդրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված պարտավորություն է:

Նման պարագաներում առանձնահատուկ դեր ունի համացանցի մատչելիությունը և՛ որպես տեղեկությունների հավաքման ու տարածման, և՛ որպես զգալի թվով ազգաբնակչության համար հեռավար աշխատանքի պայման: Հետևաբար համացանցի հասանելիության լայն սահմանափակումները չպետք է հիմնավորվեն հասարակական կարգի պահպանմամբ կամ ազգային անվտանգությամբ:

Այս համատեքստում խնդրահարույց են այնպիսի որոշումների կայացումն ու օրենքների ընդունումը, որոնք ակնհայտ կերպով խոչընդոտում են լրագրողների և լրատվամիջոցների աշխատանքը՝ այդպիսով սահմանափակելով նաև տեղեկություններ ստանալու հասարակության իրավունքը:

Միևնույն ժամանակ, Հայաստանում վիրուսի տարածման կանխարգելման, վարակակիրների մեկուսացման, ինչպես նաև հիվանդների բուժման անհրաժեշտությունից բխող պետական գործողությունների/միջոցառումների լուսաբանման ժամանակ արձանագրված որոշակի դրական փորձին զուգահեռ առկա է նաև բացասականը, ինչպես նաև՝ համավարակով պայմանավորված արտակարգ դրության ժամանակ իրադարձությունները լուսաբանելու՝ լրատվամիջոցների ու լրագրողների հմտությունների որոշակի պակաս և գործելու սահմանափակ հնարավորություններ:

Մասնավորապես, որոշ կառավարությունների բացասական օրինակով, Հայաստանում ևս արտակարգ դրության պայմաններում խուճապ չառաջացնելու, համապատասխան տեղեկությունների տարածման նկատմամբ վերահսկման անհրաժեշտության պատրվակով, անհամաչափ սահմանափակումներ մտցնելու փորձ արվեց, ինչի հետևանքով արձանագրվել են քաղաքացիական ազատությունների համար վտանգ հանդիսացող նախադեպեր:

ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ Կառավարության 2020թ. մարտի 16-ի N 298–Ն որոշման 23, 24, 25 և 26 կետերը սահմանում էին, որ Հայաստանում, «(…) ինչպես նաև երկրի տարածքներից դուրս վարակման առկա և նոր դեպքերի, անձանց առողջական վիճակի, վարակի աղբյուրների, առկա կամ հնարավոր վարակակիր անձանց հետ շփված այլ անձանց շրջանակի, զննում (վարակի թեստավորում) անցնող անձանց և մեկուսացվածների քանակի, ինչպես նաև խուճապի հանգեցնող կամ խուճապային իրադրություն ստեղծելու վտանգ պարունակող տեղեկությունների վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների (…) հրապարակային տարածումը, փոխանցումը, ներառյալ՝ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրապարակումների ձևով, ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ ԶԼՄ-ների կողմից կատարվում է միայն պարետատան կողմից տրամադրված տեղեկատվությանը (այսուհետ՝ պաշտոնական տեղեկատվություն) հղում կատարելով, նաև չպետք է հակասեն պաշտոնական տեղեկատվությանը և պետք է հնարավորինս վերարտադրեն այն»: Այս դրույթների խախտմամբ կատարված հաղորդումները ենթակա էին անհապաղ վերացման այն կատարած անձանց կողմից:

Հայաստանում, ճիշտ ինչպես ամբողջ աշխարհում, COVID-19-ի տարածմանը զուգահեռ համացանցը, երբեմն նաև ավանդական ԶԼՄ-ները հեղեղվեցին հորինված և սխալ տեղեկություններով ու առասպելներով: Օրինակ, շրջանառվող առասպելներից ամենահանրահայտներն են՝ որ սխտոր և կոճապղպեղ ուտելը կարող է կանխել վարակումը: Ավելի ազդեցիկ կեղծիքների թվում են վարակի տարածման չափազանցված թվերը և այս հարցում կառավարությունների քաղաքականության աղավաղված նկարագրությունները: Երբեմն կորոնավիրուսի մասին կեղծ տեղեկությունները շատ ավելի լայն տարածում են ստանում, քան հեղինակավոր աղբյուրներից ստացվողները: Բնականաբար, այս երևույթը ավելի շատ բնորոշ է սոցիալական մեդիային, որտեղ վնասաբեր տեղեկությունները երբեմն տարածվում են «ֆեյք» օգտատերերի կողմից: Սակայն ավանդական լրատվամիջոցներն էլ սրանից զերծ

չմնացին, մանավանդ պաշտոնական տեղեկատվության ուշացման կամ ոչ ամբողջական լինելու պայմաններում, երբ անխուսափելի է դառնում այլընտրանքային աղբյուրներից տեղեկություններ հայթայթելը։ Ակնհայտ է, որ վարակի շուրջ ապատեղեկատվության մեծ ծավալները հղի են պետության կողմից համավարակին վերաբերող բոլոր հրապարակումները գրաքննության ենթարկելու սպառնալիքով։

Ելնելով սրանից՝ լրատվամիջոցները պարտավոր են սթափ գնահատել իրավիճակը և սահմանափակումների դեպքում կիրառել նաև ինքնակարգավորման մեխանիզմներ՝ դրանք ծառայեցնելով իրապես վիրուսի տարածումը կանխարգելու նպատակին։ Այդ կարգի ինքնասահմանափակումներն անհրաժեշտ են, ինչի մասին վկայում են դրանց արդյունավետ իրագործման օրինակները, որոնք առավել կարևոր են հատկապես վարակի տարածման սկզբնական փուլում։

Ծագած խնդիրները

ՀՀ կառավարության ընդունած որոշման՝ վերը թվարկված դրույթները ունեցան պրակտիկ և մտահոգիչ դրսևորումներ. մի քանի միջադեպեր եղան, երբ ոստիկաններն անձամբ այցելեցին իրենց բնակարանից հեռավար աշխատող լրագրողների և օգտատերերի՝ ստիպելով սոցիալական ցանցից հեռացնել գրառումները։ Մասնավորապես հիշատակման արժանի է Factor.am-ի լրագրող Մարինե Խառատյանի դեպքը։ Ոստիկանության պահանջով լրագրող Մարինե Խառատյանը 2020թ. մարտի 20-ին ֆեյսբուքյան իր էջից հեռացրել է գրառումը այն մասին, որ Երևանի խոշոր արտադրամասերից մեկում բարձր ջերմություն ունեցող մարդկանց կանչում են աշխատանքի։ Լրագրողի պնդմամբ, գործատուները համատարած ոտնահարում են իրենց աշխատակիցների իրավունքները, իսկ ինքը որպես լրագրող, բարձրաձայնել է այդ մասին։ Գրառումը հեռացնելով, փաստորեն, լրագրողը հանրությանը չէր կարողացել լիարժեք կերպով փոխանցել հանրային նշանակության տեղեկությունը, այն է՝ արտակարգ դրության ժամանակ մարդու իրավունքների խախտման մասին։

Մի քանի թերթեր և կայքեր ևս ստիպված էին եղել ջնջել որոշ տեղեկություններ, որոնք համարվեցին պաշտոնականին չհամապատասխանող։

Այսպես, ոստիկանությունը «Հրապարակ» և «Առավոտ» թերթերից պահանջել էր հեռացնել իրենց գնահատմամբ խուճապ առաջացնող հրապարակումները։

«Հրապարակ» օրաթերթը, խմբագրություն այցելած ոստիկանների պահանջով հեռացրեց այն մասին հրապարակումը, որ կալանավայրերում հանձնուքներ չեն ընդունում, և դատապարտյալները բողոքում են ծխախոտի պակասից։

Առցանց «Առավոտը» խմբագրել էր հոդվածը՝ տեքստից հեռացնելով «խուճապահարույց» գնահատված հատվածը։ Մինչդեռ այդ հրապարակման մեջ ԶԼՄ-ն համադրել էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի այն խոսքը, որ կորոնավիրուսի վարակակիրների թիվն իրենք չեն թաքցնում, բայց վստահ չէ, որ այլ պետություններ ճշգրիտ տվյալներ են տրամադրում, և «Էխո Մոսկվի» ռադիոկայանով հնչած տեղեկությունը, որ Ռուսաստանի կառավարությունն ինչ-որ դեպքեր է թաքցնում։ Հատկանշական է, որ ՌԴ-

ում նույն նյութի նկատմամբ որևէ սահմանափակում չի կիրառվել: Խմբագրման հետևանքով նյութում մնացել էր միայն վարչապետի խոսքը:

Ինչպես factor.am-ի հետ զրույցում նշել էր «Երկիր մեդիա» հեռուստաընկերության ներկայացուցիչը, լիցենզիայից զրկվելու հեռանկարը այդ օրերին իրենց ստիպել է համենայն դեպս եթերացանցից հեռացնել քաղաքական հաղորդումները:

Ընդհանուր առմամբ արձանագրվել է 30 դեպք, երբ ՀՀ ոստիկանության պահանջով լրատվամիջոցները կամ սոցիալական ցանցի օգտատերերը հեռացրել են հրապարակումը կամ գրառումը:

Միևնույն ժամանակ, կային դեպքեր, երբ լրատվամիջոցները իրականում ոչ պատշաճ, նաև խուճապ առաջացնելու վտանգ պարունակող տեղեկություն էին տարածում, սակայն այդ հրապարակումները չեն արժանացել պարետատան/ոստիկանության ուշադրությանը:

Օրինակ, News.am-ը մարտի 17-ին հրապարակեց Արցախի նախագահի թեկնածու Վիտալի Բալասանյանի խոսքի տեսագրությունը, որտեղ վերջինս ասում է. «Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում առաջինն է վիրուսի տարածման աճի տեմպերի առումով»: Այս հայտարարությունը, որ օրվա տրամաբանությամբ կարող էր համարվել խուճապահարույց, հիմնված չէր փաստացի որևէ իրողության վրա, մնաց անարձագանք:

Ինչպես այս, այնպես էլ նախորդ դեպքերում կասկած է հարուցում նաև լրատվամիջոցների և սոցցանցերի օգտատերերի հրապարակումները գնահատելու համար ոստիկանության կոմպետենտությունը: Չի բացառվում, որ հենց այս պատճառով է տեղի ունեցել հրապարակումներին արձագանքելու նման ընտրողական վերաբերմունքը: Այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտ է, որ հանրային դաշտում հնարավոր խուճապ պարունակող խոսքով կամ համավարակի պայմաններում պոտենցիալ վնասաբեր բովանդակությամբ տեղեկություններով զբաղվի որևէ մասնագիտական/մասնագիտացված կառույց:

Օրինակ, մի քանի լրատվամիջոցներում ամբողջությամբ, առանց խմբագրական միջամտությունների հրապարակվեց այսպես կոչված «COVID-19 Հայաստան» Փաստահավաք խմբի հայտարարությունն այն մասին, որ իշխանությունը փորձել է հասարակությունից թաքցնել նոր կորոնավիրուսով վարակակիրների և մահվան դեպքերի իրական քանակը: Հրապարակման մեջ ներկայացվեցին մանկահասակ երեխայի և նրա մոր վարակման փաստը և 59-ամյա մի բնակչուհու մահը կորոնավիրուսային մահերի թվում չներառելու հանգամանքն ու դրա հետ կապված բազմաթիվ այլ մանրամասներ: Այս փաստը վրիպեց ՀՀ ոստիկանության աչքից, մինչդեռ հիվանդության մասին այնպիսի տեղեկություններ տարածելը, որոնք հնարավորություն են տալիս նույնականացնել անձին և իր՝ ենթադրաբար վարակված ընտանիքի անդամներին, պետք է որ ուշադրության արժանանար:

Որքան էլ համաճարակի դեմ պայքարի հարցում երկրների ձեռնարկած միջոցառումների արդյունքում տեղեկատվության հասանելիության խնդիրները գնալով

բարդանում են, միևնույն է, նկատի ունենալով արտակարգ իրավիճակների ժամանակ հանրային առողջության հարցում լրագրության ունեցված կարևոր գործառույթը, պետությունները պետք է խուսափեն վերը նկարագրված անհամաչափ սահմանափակումների ներմուծումից՝ ավելի շուտ իրենց պաշտպանության տակ առնելով լրագրողների աշխատանքը։

Լրագրողական համայնքի հակազդեցությունը

Լրագրողական կազմակերպությունները 2020թ. մարտի 20-ի հայտարարության մեջ իրենց բացասական կարծիքը հայտնեցին ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին Կառավարության որոշման տեղեկատվության տարածումը կարգավորող՝ վերը նշված դրույթների վերաբերյալ, իսկ նշված դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո արձանագրեցին, որ դրանց կիրառումն անարդյունավետ է, անհամաչափ, հակասում է ողջամտության սկզբունքներին և չի նպաստում համաճարակի պայմաններում հանրային շահերի իրացմանը։

Հարկ է նշել, որ կոնկրետ Հայաստանի պարագայում 2020թ. մարտի 25-ին ՀՀ կառավարությունը վերանայեց մարտի 16-ի իր որոշումը՝ վերացնելով կորոնավիրուսի հետ կապված խնդիրների լուսաբանման անհամաչափ սահմանափակումները։ Այդուհանդերձ, լրագրողական համայնքն արձանագրում է, որ «վերանայված դրույթներում հստակ նշված չէ այն լիազոր մարմինը, որն իրավասու է Պարետատան անունից լրատվամիջոցներին պաշտոնական տեղեկություն կամ մեկնաբանություն տրամադրել։ Դա առաջացնում է արտակարգ դրության մասին որոշման համապատասխան կարգավորումների արդյունավետ կիրառման խնդիրներ»։

Դրական գնահատելով փոփոխություններ կատարելու փաստը, լրագրողների և սոցցանցերի օգտատերերի շրջանում շարունակում են տեղ գտնել այն մտավախությունները, որ տեղեկատվության տրամադրման անկատար կարգավորումը և որոշակի սահմանափակումները այնքան կարող են «դուր գալ» իշխանություններին, որ դրանք դեռ երկար ժամանակ կարող են ազդեցություն թողնել լրատվական դաշտի վրա, անգամ երբ ճգնաժամը հաղթահարվի։

Անհրաժեշտ է նշել, որ համավարակի պայմաններում, հատկապես ոչ հեռավար աշխատող լրագրողները, օպերատորներն ու լուսանկարիչները ժամանակ առ ժամանակ անտեսում էին նոր կորոնավիրուսի հետ կապված խնդիրների լուսաբանման երբեմն անհամաչափ սահմանափակումները պետության կողմից, ինչպես նաև վարակակիրների և նրանց հարազատների նույնականացման խնդիրների ծագումը, ինչպես նաև վարակից խուսափելու անհատական անվտանգության կանոնները։

Խորհուրդներ

Նկատի ունենալով վերը նշված խնդիրներն ու մտահոգությունները, ինչպես նաև այն, որ ինքնակարգավորումը միշտ գերադասելի է իրավական կարգավորումների ենթարկվելու անհրաժեշտությունից՝ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը մշակել է համավարակով պայմանավորված և մասնավորապես, արտակարգ իրավիճակներում

լրագրողների ու լրատվամիջոցների վարքի վերաբերյալ առաջարկություններ, որոնք ունեն բացառապես խորհրդատվական բնույթ:

Ցանկացած, այդ թվում՝ նաև համավարակով պայմանավորված արտակարգ դրության լուսաբանման ժամանակ ևս, ինչպես լրատվամիջոցների և լրագրողների ամենօրյա մասնագիտական գործունեության ընթացքում, անհրաժեշտ է առաջնորդվել մասնագիտության ընդհանուր էթիկական սկզբունքներով: Սակայն դրանց հետևելու անհրաժեշտությունը սրվում է հատկապես նման զգայուն իրավիճակներում:

Առանձնահատուկ կարևոր է հրապարկվող յուրաքանչյուր տեղեկության հավաստիությունը և ճշգրտությունը.

Դրա համար խորհուրդ է տրվում կատարել նախնական մանրակրկիտ աշխատանք՝

- նախապես կապեր հաստատել հավաստի տեղեկություններ կրող աղբյուրների հետ՝ առողջապահական համակարգի պատասխանատուներ, փորձագետներ և այլն,

- նախօրոք ուսումնասիրել թեման՝ վարակի տարածման ուղիներ, խնամք, բուժում և կանխարգելում,

- ձայն տալ միայն վստահելի աղբյուրների՝ հստակ մատնանշելով հրապարակում առկա ապատեղեկատվությունը և հակակշռելով այն հավաստի տեղեկություններով,

- առանձնահատուկ ուշադրությամբ ուսումնասիրել աղբյուրները՝ հետևելով նրանց հրապարակած փաստերի հաստատման աստիճանին և միայն դրանից ելնելով կառուցել նրանց նկատմամբ տնական վստահություն,

- իրենց հրապարակումներում իրավիճակի օբյեկտիվ պատկեր ստեղծելու նպատակով համագործակցել պաշտոնական աղբյուրների հետ՝ օգտվելով նաև լրացուցիչ աղբյուրներից և հավասակշռելով պետականների տրամադրած տեղեկությունները,

- հրապարակումներում օգտագործել միայն հավաստի և տվյալ տեղեկությանը համապատասխանող լուսանկարներ և տեսագրություններ, հավաստիանալ, որ դրանք հենց տվյալ տեղեկությունն են արտացոլում,

- նկատի ունենալ, որ կորոնավիրուսի վերաբերյալ դեռևս չի կուտակվել բացարձակ գիտելիք և դրանից ելենելով՝ վերլուծություններն ու պնդումները մատուցել որպես վարկած՝ ներկայացնելով նաև այլընտրանքային պատկերացումները,

- նախապես ճշտել հաղորդվող յուրաքանչյուր տվյալ, պարբերաբար լսարանին տրամադրել թարմացվող տվյալներ,

- հիմնականում հրաժարվել սեփական կարծիքը հաղորդելուց,

- տեղեկություններ հաղորդելիս հրաժարվել օպերատիվությունից, եթե այն պետք է լինի ի հաշիվ ճշգրտության, խուսափել կեղծ/ֆեյք լուրերից,

- ներկայացանել նաև իրավիճակը այլ երկրներում,

- հատուկ ուշադրություն դարձնել հրապարակումների վերնագրերի վրա, որոնք նման իրավիճակներում պետք է առավել հստակ/համարժեք արտացոլեն նյութի բովանդակությունը և որ առավել կարևոր է՝ չառաջացնեն տագնապ/խուճապ, օրինակ, «Վարակվածների թիվն արդեն xxxx է» վերնագրին «արդեն» բառը անհիմն սենսացիայի, տագնապի երանգ է հաղորդում։

Հաշվի առնելով արտակարգ իրավիճակներում տեղեկություններ տրամադրելու և հաղորդելու սահմանափակումներ մտցնելու՝ իշխանությունների հնարավորությունը, այդ առումով հայաստանյան կարճատև փորձը, ինչպես նաև այն, որ այդ սահմանափակումները և խստացումները վերջին դեպքում շրջանցեցին նոր կորոնավիրուսով վարակված անձանց նույնականացման խնդիրը՝ ակամայից այդ հարցի ողջ ծանրությունը թողնելով բարոյական և էթիկական դաշտում, լրագրողներին և լրատվամիջոցներին խորհուրդ է տրվում.

- ընտրել վարակակիրների և նրանց ընտանիքների նույնականացման՝ ԶԼՄ-ների ինքնակարգավորման մարմինների միջազգային փորձից հայտնի հետևյալ տարբերակներից որևէ մեկը. ա) թույլատրելի է կատարել նույնականացում՝ պայմանով, որ վարակակիրները և նրանց ընտանիքները մեկուսացված են և նրանց անվտանգությանը ոչինչ չի սպառնում, բ) վարակի ինտենսիվության պաշտոնական քարտեզի առկայության պայմաններում նույնականացումը սահմանափակել առնվազն վարակակրի բնակության շենքով, մի կողմից՝ թույլ չտալով կոնկրետ անձնանց նույնականացումը, մյուս կողմից՝ տվյալ տարածքում հայտնվողներին հնարավորություն տալով հատուկ զգուշավորություն դրսևորել, գ) երբեք չկատարել վարակակիրների նույնականացում՝ ոչ անուններով, ոչ բնակության վայրով։ ԴՄ-ն ընդունելի է համարում երկրորդ տարբերակը՝ պայմանով, որ վարակակիրների «տեղայնացումը» հենվում է պաշտոնական հուսալի տվյալների վրա։

ԶԼՄ-ների կողմից վարակակիրների իրավունքների խախտումները բացառելու կամ առնվազն նվազագույնի հասցնելու համար խորհուրդ է տրվում.

- տեղեկություններ հաղորդելիս մտածել ոչ միայն դրանց ճշգրտության, այլ նաև այն մասին, թե դրանք ինչպես կարող են ընկալվել և մեկնաբանվել լսարանի կողմից, արդյո՞ք կարող են դառնալ խտրականության և խարանի առիթ,

- նախանձախնդրորեն ընտրել ոչ միայն փորձագետներին, այլ նաև բոլոր այն դերակատարներին, այդ թվում՝ վարակակիրներին և նրանց հարազատներին, որոնց խոսքը ներկայացվելու է լուսաբանման մեջ, որպեսզի հնարավորինս բացառվի տագնապի, խուճապի և ապատեղեկատվության տարածումը։

Ի դեպ, ինքնակարգավորման մարմիններում վարակակիրների նույնականացման հետ կապված խնդիրների ծագման դեպքում կամ արտակարգ դրության պայմաններում ԶԼՄ-ների կողմից վարակակիրների իրավունքների այլ խախտումների համար՝ խտրականության ենթարկում, խարան, ատելության կոչեր և այլն, խորհուրդ է տրվում կիրառել հետևյալ մոտեցումներից մեկը. ա) դիտարկել միայն կոնկրետ շահագրգիռ մարդկանց բողոքները, բ) անդրադառնալ լուսաբանման վերաբերյալ ընդհանուր բողոքների: Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը նախապատվությունը տալիս է այս մոտեցումներից երկրորդին:

Արտակարգ իրավիճակներում հարկ է ընդգծված պահպանել լրատվամիջոցների՝ չվնասելու սկզբունքը, որը նշանակում է՝

- օգնել սեփական լսարանին առողջ մնալ՝ տեղեկացնելով ոչ միայն առկա իրավիճակի մասին, այլ նաև տրամադրելով անհրաժեշտության դեպքում գործողությունների պլան և հաստատություններ, ուր նրանք կարող են դիմել,

- լսարանի հետ պահպանել մշտական կապը՝ չանտեսելով ոչ սեփական, ոչ էլ նրանց անվտանգությունը, նախապատվությունը տալով առցանց կամ հեռախոսով շփումներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ խստորեն պահպանել վարակի տարածման կանխարգելման համար անհրաժեշտ հիգիենայի բոլոր կանոնները,

- նախապես հավաստիանալ, որ իրենց հարցազրույց տվողները, մեդիա քննարկումների մասնակիցները նույնպես պահպանում են այդ կանոնները,

- չանտեսել և ձայն տալ հասարակության խոցելի խմբերին, որոնք նման իրավիճակներում կարող են հայտնվել առավել բարդ վիճակում,

- լսարանին մատուցել դրական պատմություններ՝ օրինակ, վիրուսից ապաքինվողների, վարակակիրների առողջ և շրջապատի համար անվտանգ կենցաղավարության մասին և այլն,

- կարանտինի, տեղաշարժի և այլ սահմանափակումների պարագայում լուսաբանել նաև այլ թեմաներ, որոնք կենսական նշանակություն ունեն լսարանի համար՝ արտակարգ իրավիճակի տնտեսական և սոցիալական հետևանքները, հեռավար կրթության և տեխնոլոգիական նորամուծությունների հարցերը, սննդի անվտանգության, առողջ ապրելակերպի թեմաներ, ինչպես նաև՝ «բացված» ներկայացնել կառավարական ծրագրերը, որոնք պաշտոնապես խիստ ընդհանուր գծերով են ներկայացվում, դրանց շուրջ ներգրավել անկախ փորձագետների, որոնք կարող են մասնագիտական բովանդակալից մեկնաբանություններ տալ: Ավելորդ չի լինի ներկայանցել կոնկրետ պատմություններ, իրավիճակներ, որոնք առնչվում են համավարակի դեմ կիրառվող պետական գործողություններին, այդ թվում՝ սահմանափակումներին, ներկայացնել կամավորական և բարեգործական նախաձեռնությունների օրինակներ,

- անհրաժեշտ է այս հրապարակումներին զուգահեռ արծարծել «կյանքը կորոնավիրուսից հետո» թեման, անդրադառնալով համավարակի սոցիալական, տնտեսական, բնապահմանական, մշակութային և այլ հետևանքների՝ ինչպես մեր երկրի ներսում, այնպես էլ ողջ աշխարհում հետագա կյանքի հեռանկարի ներկայացմամբ կոտրելով մարդկանց ուշադրության գերկենտրոնացումը համավարակի վրա,

- իրագործել ԶԼՄ-ների՝ կրթական և զվարճացնող գործառույթները, օգտվել տարբեր հարթակներից և գործիքներից, ինչպես նաև օգտագործել ստեղծագործական երևակայությունը՝ բազմազան դարձնելու մատուցվող տեղեկատվության ոչ միայն բովանդակությունը, այլ նաև ձևը:

Նկատի ունենալով, որ բնական աղետների ու ճգնաժամային այլ իրավիճակների պայմաններում մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել ի շահ հասարակության անվտանգության, այդուհանդերձ շեշտելով, որ նման սահմանափակումները թույլատրելի են միայն այն նվազագույն ծավալով, որն անհրաժեշտ է նպատակին հասնելու համար, նպատակ ունենալով պետությանը պարտավորեցնել՝ պահպանելու համաչափության սկզբունքը, ինչպես նաև սահմանափակումները կիրառելու առավելագույն թափանցիկությամբ, ԶԼՄ-ները և լրագրողները կարող են.

- անխափան իրագործել ԶԼՄ-ների՝ հանրային վերահսկողի գործառույթը՝ մշտապես հաշվետու պահելով իշխանության բոլոր թևերին, պահանջելով սահմանել հայցվող տեղեկությունները ողջամիտ ժամկետներում լրատվամիջոցներին տրամադրելու հստակ ընթացակարգեր՝ նշանակելով դրա համար պատասխանատու մարմին, պատշաճ կերպով իրազեկել քաղաքացիներին՝ նրանց անձնական տվյալները մշակող կառույցների, ինչպես նաև այդ տվյալների պատշաճ պաշտպանության ու անվտանգության ապահովման, համակարգի ներդրման արդյունքների մասին, ինչպես նաև նախատեսել տվյալների հավաքման և մշակման ընթացքի նկատմամբ հանրային վերահսկողության սահմանում:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2020թ. մայիսի 12-ի նիստում:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 47-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: